ԲԱՂԵՇ ՔԱՂԱՔԸ ԵՎ ՆՐԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Դ. Գ. ԿԵՐՏՄԵՆՋՅԱՆ

Արևմտյան Հայաստանի ճարտարապետական հուշարձաններին նվիրված ուսումնասիրություններում մասամբ լուսաբանվել են արտաքաղաքային շենքերն ու համալիրները։ Քաղաքային հուշարձանները, հակառակ գոյություն ունեցող բավարար մատենագրական և տեղագրական նյութերի, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու նրանց ճարտարապետական որոշ հարցերի մասին, հանգամանալից չեն ուսումնասիրված։ Ուստի քաղաքաշինական տարրերին (միջնաբերդ, բերդաքաղաք, առևտրահասարակական կենտրոն, քաղաքադարպասներ, արվարձաններ և թաղամասեր) ու ճարտարապետական հուշարձաններին վերաբերող նյութերի համադրումը և քաղաքի կառուցապատման վերլուծության խորքով նրանց գիտական մեկնաբանությունը կարևոր նշանակություն ունեն։

Ահա այդ առումով առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Բաղեշ քաղաքը և նրա բազմաթիվ եկեղեցիները, որոնց և նվիրված է սույն հոդվածը։

Բաղեշ քաղաքին և նրա եկեղեցական հուշարձաններին հակիրճ կերպով անդրադարձել են Հայաստանով անցնող հայ և օտար ճանապարհորդների մեծ մասը, որոնց հաղորդումները ամփոփվել են Ղ. Ինճիճյանի[1], Ղ. Ալիշանի[2], Ս. Էփրիկյանի[3], Մ. Հովհաննեսյանի[4] աշխատություններում և «Հայկական սովետական հանրագիտարանում»[5] ու «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում»[6]։

Բաղեշ քաղաքին և նրա հուշարձաններին մասնագիտական տարբեր տեսանկյուններից անդրադարձել են մի շարք գիտնականներ։ Ա. Գաբրիելը[7] փորձում է մեկնաբանել բնակավայրի կազմավորումը առանց ընդգրկելու հայկական աղբյուրների տվյալներն ու քաղաքի հայկական հուշարձանները, որը և նրա աշխատության հիմնական թերությունն է։ Հ. Ոսկյանը[8] «Վան-Վասպուրականի վանքերը» աշխատությունում «Սալնաձոր Բաղեշի վանքերը» ենթավերնագրի տակ ի մի է բերում տարածքի պաշտամունքային հուշարձանների որոշ մասը, այդ թվում վեց քաղաքային եկեղեցիներ։ Ն. Ակինյանի[9] «Բաղեշի դպրոցը» աշխատությունը օժանդակում է ըմբռնել Բաղեշի եկեղեցական հուշարձանների ճարտարապետական բովանդակության հարցե-

---

1 Ղ. Ինճիճյան. Ստորագրութիւն Հին Հայաստանեայց. Վենետիկ, 1822, էջ 123—124։ Նույնի՝ Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 171—179։

2 Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց. Վենետիկ, 1856, էջ 44—45։

3 Ս. Էփրիկյան. Պատկերագարդ բնաշխարհիկ բառարան Հայաստանի, հ. 1, Վենետիկ, 1902, էջ 361—367։

4 Մ. Հովհաննեսյան. Հայաստանի բերդերը. Վենետիկ, 1970, էջ 160—165։

5 Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Երևան, 1976, էջ 254—256։

6 Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. 1, Երևան, 1986, էջ 537։

7 A. Gabriel. Voyages archeologiques dans le Turquie Orientale. T. 1, Paris, 1940, p. 236—240.

8 Հ. Ոսկյան. Վան-Վասպուրականի վանքերը, հ. Գ, Վիեննա, 1947, էջ 895—943։

9 Ն. Ակինյան. Բաղեշի դպրոցը. Վիեննա, 1952։

ը. մինչդեռ Գ. Գուդվինը[10] մեկնաբանում է քաղաքի միայն մահմեդական հուշարձանները, առանց նշելու նրանց գերակշռող մասի հայկական եկեղեցիներից վերափոխված լինելու հանգամանքը։ Հ. Մանանդյանը[11] որոշ չափով անդրադառնում է Բաղեշի առևտրական նշանակությանը, իսկ Բ. Ն. Առաքելյանը[12] արհեստագործական կարևորությանը։ Հ. Մանանդյանի համեմատությամբ Թ. Խ. Հակոբյանը[13] ավելի խորը և հանգամանալից է անդրադառնում Բաղեշին։ Թուրքական հրատարակություններից առանձնապես նշելի են «Իսլամ»[14] և «Յուրտ»[15] հանրագիտարանների հաղորդած պատմական և ժամանակակից վիճակագրական աղավաղված տեղեկությունները, որտեղ ոչ մի հայկական ճարտարապետական հուշարձանի մասին խոսք անգամ չկա։ «Հայկական ճարտարապետության հուշարձանները»[16] խորագրով հրատարակված միկրոժապավենների շարքում կան կարևոր տեղեկություններ Բաղեշում և նրա մերձակայքում դեռևս գոյատևող հայկական հուշարձանների բեկորների մասին։ Բաղեշի ուսումնասիրության կապակցությամբ բարձր գնահատության են արժանի Թ. Ա. Սինկլերի[17] հրատարակած քաղաքի միջնաբերդի չափագրությունն ու որոշ աշխարհիկ և պաշտամունքային շենքերի մասին հակիրճ տեղեկություններ բովանդակող ցուցակը։

Սույն հոդվածում ի մի են բերվում վերոհիշյալ և այլ հեղինակների հաղորդած տեղեկությունները։ Առաջին անգամ կազմվում է Բաղեշի քաղաքաշինական ամբողջական պատկերը և սահմանվում նրանում հայկական եկեղեցիների ու վանքերի տեղը։ Նկատի ունենալով, որ խնդրո առարկա հուշարձանները ներկայումս առհասարակ անհետացել են կամ օգտագործվում են որպես մզկիթ, ստորև, ըստ տեղագրական նյութերի ընձեռած հնարավորության, կատարվում է նրանց ճարտարապետական փաստագրումն ու մեկնաբանությունը և արտացոլումը հայկական ճարտարապետական հուշարձանների դասակարգման մեջ։

Բաղեշ քաղաքը Սալնաձորի գլխավոր բնակավայրն էր։ Տարածքը դարպասանման (պորտելլա) ձգվում էր Տավրոբերանի, Աղձնիքի, Մոկքի և Վասպուրականի նահանգներին պատկանող մի քանի գավառների սահմանագլուխների հանդիպման վայրում։ Երկրամասն իր ունեցած առևտրական և ռազմական կարևորության պատճառով որոշ հեղինակների կողմից անվանվում է «Զորապահակ»։ Քաղաքի աշխարհագրական նիշերն են՝ հյուսիսային լայնության 38° 20′ և արևելյան երկարության 42° 5′, ծ. մ. բարձրությունը մոտ 1450—1460 մ։

Բաղեշ քաղաքը հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է Փավստոս Բուզանդի (V դար) մոտ «Բառաէջ» աղճատված ձևով[18]։ Անանիա Շիրակացին և Սեբեոսը (VII դար) նշում են «Բերդն Բաղիշոյ»։ Մինչդեռ Թովմա Արծրունին (IX—X դդ.) հիշատակում է այն «Շահաստան Բաղաղէշ»։ Հունական աղբյուրներում այն հանդիպում է Balales, արաբ աշ-

---

[10] G. Goodwin. A history of Ottoman architecture. London, 1971, p. 307—310.

[11] Հ. Մանանդյան. Հայաստանի քաղաքները X—XI դարերում. Երևան, 1940։ Նույնի՝ О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Ереван, 1954. տե՛ս Երկեր, հ. 2, Երևան, 1985, էջ 135, 157, 167, 168։

[12] Բ. Ն. Առաքելյան. Արհեստները և քաղաքները Հայաստանում IX—XIII դարերում. հ. 1, Երևան, 1958, էջ 104 և հ. 2, Երևան, 1964, էջ 109։

[13] Թ. Խ. Հակոբյան. Հայաստանի պատմական աշխարհագրություն. Երևան, 1968, էջ 284, 292—295, 397—400 և այլն։

[14] Islam Ansiklopedisi, c. 2, Ist. 1944, s. 657—664.

[15] Yürt Ansiklopedisi, c. 2, Ist. 1982, s. 1378—1444.

[16] Monuments of Armenian architecture, Rensselaer polytechnic inst., Troy N. Y., vol. 6, 1986, Mf—82 & 83.

[17] T. A. Sinclair. Eastern Turkey-An architectural and archaeological survey. Vol. 1, London, 1987, p. 297—311.

[18] Փավստոս Բիւզանդ. Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1933, էջ 43։

խարհագիրների մոտ Bädlis և ավելի ուշ զանազան ճանապարհորդների երկերում Bitlis[19]։

Քաղաքի հիմնադրման մասին պատմական տեղեկությունները հստակ չեն։ Հնագույն աղբյուրներից կարելի է եզրակացնել, որ Բաղեշը հիմնադրվել կամ վերահիմնադրվել է ուրարտացիների կողմից մ. թ. ա. 700-ական թթ.։ Անտիկ դարերում Բաղեշը Հայաստանի արքունական մայրուղու կարևոր հանգուցակետերից է եղել և կարծիք կա, որ մինչև միջնադարը գրավվել է հռոմեացիների կողմից[20], որոնք, ինչպես Արզնում, Խիզանում, Մոկսում, այստեղ ևս, ենթադրվում է, շինարարական գործունեություն են ծավալել հատկապես բերդատակի անմիջական տարածքներում։ Այս վարկածը նշող հեղինակի գործում տպագրվել է XVI դարում կատարված, ուղղանկյուն պարագծով բերդաքաղաք պատկերող մի փորագրանկար, որը, թեև հակադրելի է քաղաքի միջնադարյան կառուցապատմանը, իր համեմատական գծերն ունի, սակայն, Արզնի[21], Թեոդոսուպոլսի[22], Խիզանի և Մոկսի[23], այդ թվում նաև ուրարտական համարվող Ջառնակիի և Աղնավուրի[24] հետ։ Ինչևէ, պարզորոշ է բնակավայրի կառուցապատման հիմքում ուրարտական և անտիկ ավանդների առկայությունը[25]։

Հայկական մատենագրության համաձայն, Բաղեշը վաղ միջնադարյան ամրոց կամ ամրոցավաններից էր, որը IX—XI դդ. քաղաքանում է և ընդարձակվում[26]։ Հետագա դարերում Բաղեշը մնում է Հայաստանի տասը կարևորագույն քաղաքների կազմում, որը 1915 թ. Մեծ եղեռնին լիովին հայաթափվում է։ Այժմ երկրորդական քաղաք է, որի հայեցի հուշարձանները ամբողջությամբ նենգաբար քանդվել են կամ վերափոխվել են այլ կառույցների[27]։

Քաղաքի տեղանքը պատկերավոր կերպով նկարագրել է Հ. Լինչը. «Տիգրիսից հոսող երկու գետակներ ձևավորում են քաղաքատարածքը։ Բնակավայրը իր ձևով հիշեցնում է խեչափառի ուրճագիծը, որտեղ հնամենի ամրոցն ու բերդաքաղաքը մարմինն են, իսկ տարբեր ուղղություններով երկարող գետերը՝ մարմնի անդամները։ Քաղաքը շատ հին է, որն, ըստ տեղի բնակիչների պատմած ավանդապատման, ջրհեղեղից մի քանի տարի հետո է հիմնադրվել»[28]։ Իրոք, Բաղեշի տեղանքը Տավրոսյան լեռների երեք ձորերի

---

[19] Հ. Հյուբշման. Հայոց տեղաց անունները. Վիեննա, 1907, էջ 187. հմմտ. Jacut. Mu'ujam ul Buldan. Leipzig, 1924, p. 529.

[20] Pars Tuğlaçl (Բարսեղ Թուղլաչյան). Osmanli Sehirleri, Ist., 1985, s. 57.

[21] H. Kiepert. Uber die Lage der Armenischen Haupt-Stadt Tigranokerta. Berlin, 1873—see Karten von Arzen nach consul Taylor.

[22] Դ. Կերամենչյան. Վաղ միջնադարյան Հայաստանի քաղաքներու առևտրահասարակական կեդրոններու քաղաքաշինական և ճարտարապետական առանձնահատկությունները. «Բազմավեպ», 1985, թ 1—2, էջ 110—112. հմմտ. Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913, էջ 338—339։ Ղ. Զարբհ. Կարինապատում. Պէյրութ, 1965, էջ 59։

[23] T. A. Sinclair. Eastern Turkey-An architectural and archaeological survey, vol. 1, pp. 232, 236.

[24] Ch. Burney & G. Lawson. Measured plans of Urartian towns.—Anatolian Studies, vol. 10, 1960, pp. 183, 185—186, 193.

[25] Comp. H. F. B. Lynch. Armenia, travels and studies. Vol. 11, London, 1901, p. 150; J. Shiel. Journey from Tabriz, Through Kurdistan, via Van, Bitlis, etc.—Journal of Royal Geographical society, 1893, vol. VIII, p. 73.

[26] Բ. Ն. Առաքելյան. Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում. հ. 1, էջ 104. հ. 2, էջ 109։

[27] Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 553—565. հմմտ. T. A. Sinclair, Op. cit., p. 258.

[28] H. F. B. Lynch. Op. cit., fronting p. 147.



Նկ. 1

միացումից առաջացած 1,5—2 կմ լայնությամբ ձորահովիտ է։ Քաղաքը դարավանդաձև դասավորությամբ ծավալվում է Բաղեշ գետի և նրա մի քանի վտակների երկու կողմերում։ Ն. Սարգիսյանը հետևյալ ձևով է տեղագրում քաղաքը՝ «Գետք երեք մտանեն ի մէջ քաղաքիս, առաջինն՝ ի ձորոյն Գոմաց, որ և անցանէ առաջի Ամրտօլու մենաստանին, երկրորդն՝ ի ձորոյն Ծպկորու, և դոքա միանան առաջի բերդին, երրորդն՝ ի ձորոյն Աւեխու, որ ի ներքնակողմն նորին ձորոյ, որ հանէ ընդ ճանապարհ Կիւզէլ-տերէ կոչեցեալ գաւառին»[29] (նկ. 1)։

Բաղեշի քաղաքաշինական գործարարական կազմը ուշ միջնադարյան տվյալներով բաղկացած է եղել հիմնական չորս մասերից՝ ամրոց կամ միջնաբերդ, առևտրական երկար փողոց, նրա շուրջ ծավալվող հին քաղաք և առանձին թաղամասեր։

Միջնաբերդը բարձր ժայռաղանգվածի ձևով գտնվել է Գոմաց և Ծապկոկոի ձորերով դեպի հարավ ընթացող երկու գետերի միացման վայրից հյուսիս։ Ըստ Սինկլերի չափագրության և այլ արխիվային նյութերի[30], տեղում գոյատևող համալիրը եռանկյունաձև մի հրվանդան է՝ գագաթը դեպի հյուսիս և հիմքը դեպի հարավ՝ հին քաղաքի կողմը։ Եռանկյունու արևմտյան և հյուսիսային գագաթները հատած տեսք ունեն, մինչդեռ արևելյանն ուղղանկյունաձև է։ Միջնաբերդի պարագիծը համարյա հավասարաչափ է, կողային երկարությունը՝ 150 մ։ Եռանկյան սրունքները զուգահեռ են նրա արևելյան և արևմտյան կողմերով հոսող գետերին, որոնք, միախառնվելով բերդի ստորոտից 200 մ հարավ, քաղաքի կառուցապատումից առանձնացնում են բերդաքաղաքի հնագույն հատվածը։ Համեմատաբար լավ են պահպանված ամրոցի արևելյան և հարավային կողմերով կորագիծ ձգվող պարըսպապատերը, որոնց հիմքերը նստում են տների ետևը բարձրացող սլացիկ ժայռերի վրա։ Արևմտյան կողմի ժայռաբեկոր-պատվանդանի ցածր լինելու պատճառով համապատասխան պարսպապատերն աստիճանաբար քանդվել և գլորվել են դեպի գետափ։ Մուտքը հարավային կողմում է։ Բերդատակով ձգվող թեք մի արահետ արևմուտքից արևելք ոլորապտույտ հասնում է արևելյան գագաթի, հատակագծում սեղանաձև, պարսպապատ մուտքային հանգույցի արևմտյան կողմում տեղադրված դարպասին։ Այդտեղից շրջադարձային դրվածքով, երկու կողմերից պարսպապատ մոտ 30 աստիճաններ առաջնորդում են դեպի միջնաբերդի ներքին տարածքը։ Պարսպապատերի աշտարակները տարբեր տեղերում ունեն այլ հատակագծային-տարածական ձևեր, որոնք տարբեր ժամանակաշրջաններում կատարված վերանորոգումների արդյունք պետք է դիտել։ Պարիսպներն իրենց պարագծային լուծումներով հարմարվում են բնական տեղանքին (նկ. 2, Դ)։

Ամրոցի ներքին տարածությունում ներկայումս մնացել են միայն հարավ-արևմտյան անկյունի ապարանքի ավերակները և մի ջրամբար։ Հյուսիսային կողմում նախապես գտնվել են մթերանոցներն ու օժանդակ նշանակության այլ սենյակները։ Ուշ միջնադարի սկզբներին միջնաբերդում ավելացել են քաղաքի պաշտոնեության բնակարանները։ Ամրոցի բարձրության տարբերությունը բերդաքաղաքից 600 քայլաչափ է եղել, պարիսպները ունեցել են 7 մ հաստություն և մինչև 16 մ բարձրություն[31]։

Բաղեշ գետի արևելյան և արևմտյան ափերին ծավալվող թաղամասերի դասավորությունը հիշեցնում է կանաչապատ ընդարձակ ամֆիթատրոն, որտեղ բեմի կենտրոնում գտնվում է բարձր ամրոցը։ Հ. Լինչի և ավելի ուշ

---

29 Ն. Սարգիսեան. Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս. Վենետիկ, 1864, էջ 240—241։

30 Գծագիրը տե՛ս T. A. Sinclair. Op. cit., p. 298, 300.

31 Օտար աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, հ. 4, էվլիա Չելեբի, Երևան, 1964, էջ 197։

նաև Ա. Գաբրիելի[32] կողմից հրատարակված քաղաքի հատակագծերում (նկ. 2, Ա և Բ) պարզորոշ կերպով ընկալվում են Բաղեշում երկու տարբեր խտությամբ կառուցապատված գոտիներ։ Դրանցից առաջինը խիտ կառուցապատված քաղաքի հնագույն մասն է, իսկ մյուսը՝ կանաչների մեջ թաղված մենատներով կառուցապատված տարածությունը։

Հին քաղաքն ունեցել է 1—0,8 կմ² տարածություն[33] և մինչև XIII—XIV դդ. դեռևս պատված է եղել կիսաքանդ պարիսպներով[34]։ XIX դարի դրությամբ փողոցների ցանցը անկանոն է։ Փողոցները կորագծային պտույտներով, միջնադարյան անկանոն ձևի հրապարակները կապելով բերդատակի հատվածին, նրբանցքներով միացել են ձախ գետեզրով ձգվող պողոտային, որի վրա եղել են 11 փայտաշեն և բարաշեն կամուրջներ[35]։ Բնակելի տները ամենուրեք ունեցել են դարավանդաձև դասավորություն, իսկ արվարձանային մասերում՝ մենատների կետային օրինաչափ տեղադրաշխում։



Նկ. 2

Հին քաղաքի պարագծով, հիմնական փողոցների սկզբնամասերում մինչև վերջին ժամանակները պահպանված են եղել Վանա (հավանաբար Ծապրակոռի թաղամասի հյուսիս-արևելյան կողմում դեպի Վան տանող ճանապարհի սկզբում), կերպասավաճառների, Արաբու շուկայի, Ամիրու շուկայի (դեպի Ամիրու բերդի կողմը՝ քաղաքի հարավ-արևելյան ուղղությամբ), պղտավաճառների և Օրղուն կամ Գաղտան դարպասները։ Հիշատակված դարպասների տեղերը աղբյուրներում չեն նշվել, այնուամենայնիվ դրանց քանակը ցույց է տալիս, որ առևտրահասարակական համալիրն ունեցել է շառավղաշրջանային հովհարաձև հորինվածք, որի հայտնի զուգահեռներից է Անի քաղաքի կենտրոնի համալիրը։

Բաղեշ քաղաքի առևտրահասարակական կենտրոնը (նկ. 2, Գ) սկզբնա-

---

[32] H. F. B. Lynch. Op. cit., fronting p. 147. A. Gabriel. Voyages archeologiques dans la Turquie orientale. T. 1. p 237.

[33] H. F. B. Lynch. Op. cit., fronting p. 147. հմմտ. Եվլիա Չելեբի, էջ 196 207.

[34] Abu-l-Fida. Taquim ul Buldan. Liden. 1878, p 351.

[35] T. A. Sinclair. Op. cit., p. 298.

վորվել է անմիջապես հարավային բերդատակում և համապատասխան կարգով զարգացել դեպի դլխավոր պողոտան ու նշված քաղաքադարպասները, բացի Օրղունից (Գաղտուց), որը, ինչպես ցույց է տալիս անունը, հատկացված էր միջնաբերդին սպասարկելու համար։ Քաղաքն այցելող Էվլիա Չելեբին 1655 թ. հիշատակում է 9 կարավանատուն, 1200 խանութներ, Խուսրև փաշայի և «Կաբբանի» շուկաները և մի խաղախորդարան[36]։ Ելնելով բազմաթիվ կամուրջների և դարպասների առկայությունից կարելի է ենթադրել, որ կենտրոնը ունեցել է ամֆիլադային կառուցվածք, ինչպիսին հանդիպում է Կարինում կամ Կապադովկյան Կեսարիայում։ Բերդատակի Գյոք կամ կապույտ կոչվող գլխավոր հրապարակը, որտեղ մինչ օրս արևելյան կողմում մնում է XII դարի կեսերին մզկիթի վերածված եկեղեցին[37], սկզբնավորում էր կենտրոնի տվյալ հորինվածքը։ Փաստորեն Բաղեշի առևտրահասարակական կենտրոնը շտռավղաձև և արտաքինից կորագծով կապում էր նշված դարպասամերձ հրապարակ-շուկաները, որոնք հարավային կողմից ավարտվում էին Ավեր կամ Էվել մեյդանով։ Ճանապարհորդական տեղեկությունների համաձայն Բաղեշում առևտրահասարակական կենտրոնի շուրջ եղել են 17-ից ավելի թաղամասեր, դրանցից կարևորագույններն են՝ Տաշ, Գյոք, Սապկոր, Կարմիր (Կրզըլ), Զեյդան, Գոմուս կամ Գոմոց և այլ՝ փոխված անուններով հիշատակվածները[38]։

Վերևում արծարծված քաղաքաշինական մանրամասնությունները ցույց են տալիս, որ մինչև սելջուկյան ասպատակումները Բաղեշը Հայաստանի լիարժեք քաղաքաշինական համակարգ ունեցող ոչ մեծ քաղաքներից է եղել, ինչպես Ոստանն է, Մուշը, Մանազկերտը, Արծկեն, Արճեշը, Դարույնքը և այլն։ Համապատասխանաբար այն կառուցապատված է եղել բազմաթիվ հայեցի շինություններով, վանքերով և եկեղեցիներով։

Պատմական տվյալների համաձայն Բաղեշ քաղաքում եղել են Կարմրակ ս. Նշան, Ս. Սարգիս, Հինգ խորան, Ս. Գևորգ եկեղեցիները և Ամրտոլու, Գոմոց ս. Աստվածածնի, Ավեխու ս. Աստվածածնի, Խնդրակատար ս. Աստվածածնի վանքերը։ Նշվածներին կարելի է ավելացնել նաև մզկիթի վերածված Մայր տաճարը, Ամրտոյիի մերձակա Ս. Սիմեոնը, քաղաքի արևելյան բարձունքի վրա տեղադրված Ս. Գևորգը, «շաբաթացած» ս. Անանիան, Շեխսի և Ս. Սիոնի եկեղեցիները, մի մատուռով գոյատևող Ծապկոռի ս. Կարապետը[39]։

Կարմրակ ս. Նշան կամ Ս. Կիրակոս եկեղեցու անվանումն առնչվում է ս. Խաչի մասունքի, ս. Կիրակոսի նշխարների և շենքի տանիքի կղմինդրապատ լինելու հետ։ Հուշարձանի հնության և կարևորության մասին վկայում է շրջակա թաղամասի մինչև օրս Կարմրակ (Կրզըլ) անվանումը։ Կարմրակ ս. Նշանը արտաքինից ուղղանկյուն, փոքր գմբեթավոր տաճար է։ Եկեղեցու ծածկի երկթեք կտուրների համադրումից կազմված խաչաձև հորինվածքը մզկիթի վերափոխելիս քանդվել և հարթեցվել է։ Տանիքային համակարգից անաղարտ պահպանվել է արտաքուստ և ներքուստ կորագծային պարագիծ ունեցող, թմբուկ և վեղար համակարգով գմբեթը (նկ. 3, Բ)։

Բաղեշի գլխավոր եկեղեցին, ինչպես տարոն-վասպուրականյան մի շարք քաղաքների (Վան, Ոստան, Մուշ, Մանազկերտ, Խլաթ, Արծկե) մայր եկեղեցիները, XII—XIII դդ. վերածվել է մզկիթի[40]։ Հուշարձանը Շերեֆիյե անունով գտնվում է Կարմրակ ս. Նշանից մի փոքր հարավ։ Նկատի ունենալով, որ եկեղեցու հատակագծային հորինվածքը մեծ փոփոխությունների չի

---

36 Էվլիա Չելեբի, էջ 200։

37 Ս. Էփրիկյան. նշվ. աշխ., էջ 363։

38 H. F. B. Lynch. Op. cit., pp. 148—149. հմմտ. Էվլիա Չելեբի. էջ 200—201։

39 Ն. Սարգիսյան. նշվ. աշխ., էջ 341—342. հմմտ. Հ. Ոսկյան. նշվ. աշխ., հ. Գ, էջ 895—946։

40 T. A. Sinclair. Op. cit., p. 356. Comp. Pars Tuglaci. Op. cit., s. 58.

ենթարկվել, սակայն, տեղում եղած շինության հիման վրա բնորոշվում է նրա ճարտարապետական տիպը։

Համաձայն Հ. Լինչի հաղորդած տվյալների, Բաղեշի Մայր տաճարը եռանավ, հինգ սրահանի հորինվածք է։ Այսինքն՝ կենտրոնական վեց սյուներով բազիլիկ տիպի եկեղեցի է։ Սրա արևելյան պատը վերափոխելիս ամբողջությամբ քանդվել է և խորանային մասն ու ավանդատները հեռացվել են։ Ինչպես հասկացվում է եղած նկարագրությունից, հուշարձանը ներքուստ ունեցել է կամարակապ լուծում[41]։ Համաձայն սրբավայրի քաղաքաշինական տեղի, նրա հիմնադրությունը վերագրելի է վաղ միջնադարյան ժամ. տնակներին և որպես այդպիսին համեմատական է հորինվածքի առումով Վանի Հայկավանքի և Ոստանի բերդատակի (նույնպես մզկիթի վերածված) եկեղեցիների հետ[42]։

Ս. Գևորգ Զորավարի կամ Ս. Անանիայի վանքը (եկեղեցին). «Շինվեր է Ամրդոլի սբ. Հովհաննես վանքի մոտերը։ Բավական երկար ժամանակե ի վեր շաքաթացած։ Անոր հովանիին տակ 1418 թ. Մկրտիչ սարկավագ Հայսմավուրք կը գրե և 1575 կը գրվի Ավետարան մը»։ Համաձայն այլ հաղորդման այն մի փոքր հարավ էր Ամրտոլու վանքից[43]։ Նշված երկու տեղեկությունները թույլ են տալիս միայն որոշել, որ Ս. Անանիան գտնվում էր դեպի Ավեր հրապարակի կողմը, դեպի առևտրահասարակական կենտրոնը։

Ս. Սարգիս և Հինգ խորան հանդիպակաց եկեղեցիների տեղը քաղաքի տարածքում հայտնի չէ։ Գոյություն ունեցող տեղեկություններից սույն ուսումնասիրության համար կարևոր է, որ Ս. Սարգիսը գավիթ-տաճար տիպի հորինվածք է եղել, իսկ մյուսը՝ հինգ խորանով առանձին խանգնած եկեղեցի[44]։

Ս. Կղեմեսի և Ս. Սիմեոնի եկեղեցիները *XII—XV* դդ. մզկիթի վերածված հուշարձաններից են[45]։ Նրանք միասնաբար գտնվել են Ամրտոլու վանքից հյուսիս՝ դեպի Գոմոց վանք երկարող թաղամասերի տարածքում։ Ուշագրավ է, որ վերջին տարիների դաշտային դիտումներով նշված տարածքում եղած մեկ տասնյակի հասնող մզկիթների գերակշռող մասը եկեղեցուց է վերափոխված. դրանք միանավ, երկսրահ տիպի հուշարձաններ են և չունեն մզկիթին բնորոշ հատակագծային հորինվածք։ Վերջիններից իր երկհարկ հորինվածքով առանձնանում է Շեյխ Հասանի մզկիթ-դամբարանը, որի տեղը ըստ տեղագրական նյութերի կարելի է նույնացնել Ս. Կղեմեսի և Ս. Սիմեոնի հետ։ Թ. Ա. Սինկլերը հաղորդում է. «Միջնաբերդից մոտ 1 կմ հեռավորությամբ դեպի Խոսրով-չայի արևելյան ափը և գետերի միացման հանգույցից 150 մ արևմուտք, սարալանջի վրա գտնվում է Շեյխ Հասանի մզկիթը»[46]։ Որոշ մասնագետներ շենքը համարում են օսմանյան ժամանակներում՝ 1725 թ. հիմնադրված մզկիթ։ Մինչդեռ այն առանց փոփոխության մզկիթի է վերափոխվել տեղում գոյություն ունեցած եկեղեցուց, հավանաբար դեռևս XVI դարում կամ ամենաուշը XVII դարում, իսկ 1725-ին ուղղակի վերածվել է երկհարկ հուղարկավորական տաճարի (տյուրբեյի)։ Տվյալ նորացումը կատարվել է այնպես, որ գոյություն ունեցող եկեղեցին վերածվել է հուղարկավորական սենյակի, իսկ վերին իբրև թե նոր մասը կառուցվել է որպես մզկիթ։ Գոյատևող հուղարկավորական սենյակում, հակառակ կատարված վերափոխումների, դեռևս ընկալելի է եկեղեցու հատակագծային հորինվածքը։ Այն արտաքինից ձգված հարաբերությամբ ուղղանկյունի է, դահլիճն արևելյան

---

[41] H. F. B. Lynch. Op. cit. p. 152.

[42] Comp. ibid. pp. 101–107, 125.

[43] Հ. Ոսկյան. Նշվ. աշխ., հ. Գ, էջ 914.

[44] Ա. Էփրիկյան. Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան. հ. Ա, էջ 363.

[45] Ն. Սարգիսյան. Նշվ. աշխ., էջ 242. Հմմտ. Ղ. Ինճիճյան. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, էջ 173։

[46] T. A. Sinclair. Op. cit. p. 387.

կողմից վերջավորվում է երկու երկհարկ ավանդատներով և կենտրոնական խորանով։ Դահլիճի հարավային պատին ավելացվել է միհրաբը, իսկ սրամբտյան կողմում չորս փայտյա սյուներով գավիթը վերածվել է մի շարք սենյակների, որոնք կիսավեր վիճակում մինչև օրս պահպանվել են։ Սենյակներից մեկում համատեղվել է վերին հարկ տանող սանդղավանդակը։ Ուշագրավ է այն, որ հուղարկավորական սենյակի հորինվածքը նույնությամբ կրկնվել է վերին հարկում և արևմտյան կողմում հավելվել է երկու սենյակ ևս։ Նման փաստի տոկայությունը ցույց է տալիս, որ 1725 թ. հավելումը վերաբերում է միայն արևմտյան սենյակներին, հենց դրանք էլ մինչև օրս ծառայում են որպես աղոթատեղի, իսկ բուն դահլիճը վերածվել է պահեստի[47]։ Հետևաբար տվյալ հուշարձանը երկհարկ դամբարան եկեղեցու տիպի կառույց է, որի ղուգահեռները Հայաստանում հանդիպում են XIII—XIV դդ.[48]։

Դժվար է պնդել, որ Շելխ Հասանի նկարագրված հուշարձանը դա նույն Ս. Կղեմեսի և Ս. Սիմեոնի եկեղեցիներից կազմված համալիրն է, թեկուզ նրանց գտնված վայրը քաղաքի կազմում համարյա համընկնում է (տե՛ս նկ. 2, Գ)։ Բայց տվյալ իրողության առկայությունը ցույց է տալիս, որ երկհարկ դամբարան-եկեղեցի տիպի հորինվածքներ Բաղեշում կային և հնարավոր է նման լուծում ունենար Ս. Կղեմեսից և Ս. Սիմեոնից կազմված համալիրը. առանց բացառելու երկու եկեղեցիների հարակցման այլ տարբերակների հնարավորությունը, ինչպիսին են Վանա Ս. Սիոն և Տարոն-Վասպուրականում լայն տարածում ունեցած զույգ եկեղեցիներից կազմված (Վանա Ս. Սահակ և Ս. Ստեփանոս, Ս. Պողոս և Ս. Պետրոս, Սորա Ս. Քրիստափոր, Գանձակա Ս. Աստվածածին, Նաբեկա, Իլու և այլ վանքերը) հորինվածքները։

Ամրտոլու կամ Ամլորդվո Ս. Հովհաննես Մկրտիչ վանքը կոչվել է նաև Ս. Հովհաննեսի վանք։ Համաձայն Կոլոտ պատրիարք Կյուլեսերյանի նկարագրության՝ «վանքը կը բարձրանա «Վիմածիլ» բլուրին գագաթը։ Արևելյան կողմեն «սահմանավորեալ արեգնածագ կողմամբ զարմանաշատ աղբերակօք կարկաչահոսիւք և ծաղկապաճոյճ փոքր պատիղիւ»։ Արևմտյան հարավային կողմեն «ծիծաղածավալ երկրաչափու վիմաբուղխ հորդ ընթացիւ գետով և թեկնաթեկ հեղաքայլ առվիւ, ոլորախաղացեալ առ հարավով, գեղավորեալ ծառատնկօք պտղավետիւք»։ Իսկ հյուսիսային կողմեն՝ «բարձրաբերձ տամբք քրիստոնեից հպավորեալ շիրիմիւք հավատացյալ ննջեցելոց»[49]։ Մի այլ արտահայտությամբ վանքի տեղը սահմանվում է այսպես. «Վանքը հիմնված է Բաղեշ քաղաքին հարավային ծայրը լեռնաձորի մը կուտակումի մեջ և օժտված գեղեցիկ դիրքով մը»[50]։ Ուստի Ամլորդվո վանքը գտնվել է Բաղեշի հարավային Ավեր հրապարակից հյուսիս-արևմուտք, Բաղեշ և Ջեյդան (համանուն թաղամասում) գետերի հանդիպման վայրից վերև։ Տեղադրված է քաղաքի բոլոր կողմերից տեսանելի՝ համանուն թաղամասից դեպի Գոմոց սահմանները երկարող բարձունքի վրա։

Ավանդապատումը վանքի հիմնադրումը վերագրում է «ի հին և ի վաղեմի ժամանակաց կայր դասատուն վարդապետաց ի քաղաքն Բաղէշ ի վանքն, որուն անուն Ամրտոլու ասեն»[51]։

---

[47] Comp. T. A. Sinclair, Ibid & P. Tuglaci. Op. cit., p. 59.

[48] Այդ մասին տե՛ս В. М. Арутюнян. Каменная летопись Армянского народа. Ереван, 1985, с. 77, նաև՝ Ս տ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը. Երևան, 1960, էջ 179—194 և ուրիշներ։

[49] Բ ա ր դ ե ն վ ր դ., հոդվածաշարք՝ Մուշեն Պիթլիզ. Թ—ԺԱ, «Բյուզանդիոն», 1900, № 1204. հմմտ. «Բյուզանդիոն», 1907, № 3300 և Հ. Ո ս կ ի ա ն. նշվ. աշխ., հ. Գ, էջ 896։

[50] Մ. Մ ի ր ա խ ո ր յ ա ն. Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի. հ. Ա, Կ. Պոլիս, 1884, էջ 58. հմմտ. Տ ր դ ա տ ե պ ի ս կ ո պ ո ս Պ ա լ ջ ա ն. հոդվածաշարք՝ Հայ վանորայք, Բ. բ, «Բյուզանդիոն», 1900, № 1001։

[51] Ա ռ ա ք ե լ Դ ա վ ր ի ժ ե ց ի. Պատմութիւն. Վաղարշապատ, 1896, էջ 390։

Վանքի մասին առաջին հիշատակարանային տեղեկությունը դեռևս XV դարի առաջին կեսից է[52]։ Փաստորեն դրությունն օրինաչափորեն այստեղ ևս կրկնվում է՝ ինչպես Վասպուրականի հուշարձանների գերակշռող մասի համար։ XV դարից սկսած մատենագրական հիշատակությունները հաճախակի են[53], որոնք ցույց են տալիս վանքի աշխույժ և կարևոր գրչության կենտրոն լինելը։ Վանքի տարեգրության կապակցությամբ կարևոր է, որ այն XVI դարի ավարտին հիմնովին վերաշինվում է. «Սա (Բարսեղ վարդապետը—Դ. Կ.) զամենայն շինուածն միահողոյն քակեաց և ինքն վերստին հիմնարկեալ շինեաց և կատարեաց զբովանդակն, զեկեղեցին և զտներն և զայլ որ ի նոսա»[54]։ Մի այլ վերանորոգման և ընդարձակման մասին տեղեկություն հանդիպում է նաև XVII դարի 20—30-ական թ. «Զսոյն սուրբ վանքս մեծանուն ի հիմանէ նորա կերտեալ կրկին սրբատաշ, կրաված, խաչակառ կաթուղիկէիս բախատես բնակարանիք, աշակերտական գրովք... համալսարան երևելի...»[55]։ Վանքը կողոպտվել և քանդվել է 1895—1896 թթ. և քարերը օգտագործվել են այլ շինությունների համար։

Ամլորդվո վանքի մասին պահպանված միակ նկարագրական տեղեկությունը վերաբերում է Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն։ Ըստ այդ տեղեկության այն արտաքինից 15×20 ճարտարապետական կանգուն (իմա՝ 8,2×10,2 մ) չափերով ուղղանկյուն, գմբեթավոր շենք է։ Փաստորեն, աղոթասրահը կենտրոնական չորս սյուներով և ութ որմնամույթերով եռանավ հորինվածք է, որտեղ կենտրոնական նավը կողայիններից ավելի լայն է։ Ներսույթը բոլոր ուղղություններով կամարակապ է և սլացիկ հարաբերությամբ, այսինքն՝ շենքի տարածական լուծումը վերձիգ է։ Պարզորոշ է, որ տանիքային լուծումը գմբեթի շուրջ խաչաձև դասավորությամբ երկթեք կտուրներից է կազմված, հետևաբար կառույցի անկյունային հատվածները լուծված են ավելի ցածր։ Տաճարը արևելյան կողմում եռախորան է։ Ընդ որում կողմնային խորանները բացվածքով ավելի նեղ են, քան կենտրոնականը։ Խորանների հյուսիսային և հարավային կողմերում տրված չորսական աստիճանների հիշատակությունը ցույց է տալիս, որ նույն չափով խորանային բեմը բարձր է եղել դահլիճից։ Խորանի առաջ գտնվել է դպրաց դասը եպիսկոպոսական գահի հետ միասին։ Նշելի է, որ խորանների հաղթակամարները և հատակագծային լուծումները ձգված կողերով կիսաշրջաններ են եղել[56]։

Ամլորդվո Ս. Հովհաննես եկեղեցու առաստաղային լուծումը առանձին մասերի պարագծային ընդգծման սկզբունքով է, որտեղ արտաքինից ութանիստ և ներքուստ կորագծային գմբեթը, ինչպես հասկացվում է եղած հապճեպ նկարագրություններից, բնորոշվում է գոթական (իմա՝ ձգված) համաչափությամբ[57]։ Եկեղեցին կառուցվել է Բաղեշի հուշարձաններին հատուկ տեղական դարձնագույն քարից և ունեցել է համատարած զարդամշակում։ Պետք է կարծել, որ վերջինը Բաղեշի քաղաքային հուշարձանների ճարտարապետության բնորոշ ընդհանուր գիծն է, մանավանդ որ մինչև օրս քաղաքի տարածքի զանազան շենքերում կան եկեղեցիներից խլված քանդակազարդ բեկորներ։ Դրանցով հարուստ են հատկապես Իշլասիյե մեդրեսեի (կրոնական դպրոց) և միշնաբերդի ստորոտի տարածքի շենքերը[58]։

---

52 Ղ. Փիրզալեմյան. Նոտարք Հայոց, Կ. Պոլիս, էջ 177—178։

53 Տե՛ս Հ. Ոսկյան. նշվ. աշխ., էջ 904—908։

54 Առաքել Դավրիժեցի, էջ 390։

55 Բարգեն ծ. վ. Կյուլէսերյան. Կոլոտ Հովհաննես պատրիարք. Վիեննա, 1904, էջ 142—144, 147։

56 Ամլորդվո Ս. Հովհաննեսի փաստագրական վերլուծության համար հիմնականում օգտագործվել է «Տեսարանք հայրենի աշխարհի»,—«Արծուի Վասպուրականի», Վարագ, 1864, էջ 67 (հեղինակը չի նշվում)։

57 Տե՛ս «Բյուզանդիոն», 1901, № 1639։

58 Այդ կապակցությամբ տե՛ս A. Schone & A. Haghnazarian. Photogmaphical message 1972 published in „Monuments of Armenian architecture", vol. 6, Mi 83.

Խնդրակատար ս. Աստվածածին վանքը «Բաղեշի երկրորդ անվանի վանքն է, կառուցված է քաղաքի հարավակողմը, Ամպ գյուղին դիմացը, ձորակի մը մեջ, շրջապատված գեղեցիկ և առողջ բնությամբ»[59]։

Ավանդապատումը վանքը համարում է առաքելաշեն, որը, իմիջիայլոց, հերքվում է ուսումնասիրողների կողմից[60]։ Նշելի է, որ նման հաղորդումները պետք է նկատի առնվեն գրանցում եղած ճշմարտության հակվող իրողությամբ։ Վանքի վաղ հիմնադրությունը երբեք չի նշանակում նրա գլխավոր կառույցների թվարկություն, գուցե և հնադույն շենքերից որևէ բան պահպանված չլինի[61]. օրինակ Գլակավանքը, Աշտիշատը, Ծղերդուտը, Աղբրկա և այլ վանքերը հիմնադրությամբ լուսավորչաշեն են, բայց նրանցից պահպանված վաղագույն շենքերը V—VII դդ. են։ Միևնույնն է դեպքը նաև խնդրո առարկա վանքի համար. հակառակ որ այն վաղ միջնադարյան հիմնադրություն է, նրա մասին ձեռագրային տվյալներով պահպանված վաղագույն հիշատակությունը XV դարից է[62]։ Հ. Ոսկյանը, հաշվի առնելով մատենագրական տվյալները, հակվում է Խնդրակատար վանքի կառույցները թվագրել XIII դարից հետո[63]։ Վանքի տարեգրության կապակցությամբ կարևոր է, որ վանքը, ինչպես և քաղաքը ավերվել է 1504 թ. պարսիկ Սոֆիի կողմից, սակայն շուտափույթ վերականգնվել է և 1514 թ. Ներսես վարդապետը Թումաջանի ձեռքով կառուցել է տալիս վանքի պարիսպները[64]։ 1639 թ. գրված մի ուրիշ հիշատակարանի համաձայն՝ «շինեցաւ ի հիմանէ սրբատաշ քարիւ ներքոյ. կմբէթաւոր և երկնանման և գեղեցիկ յօրինուածովք։ Շրջապատ և բարձրաբերձ պարսպաւ և խցերօք»։ Մի փոքր ավելի ուշ բարեկարգվում է նաև վանքի առուն[65]։ 1749 թ. կարևոր մի վերանորոգություն է ծավալում Երեմիա եպիսկոպոսը։ Նա վանքի «խախտված գավիթը կը նորոգէ և ջաղացքին քամարները կը վերաշինէ. անոր օրով Շերվանցիները վանքը կը թալանեն ու կավերեն, բայց բարեբախտորեն կարելի կըլլա ամեն բան վերահաստատել»[66]։ Նույն դարի երկրորդ կեսին Վարդան Բաղիշեցին «սնեալ ի նոյն վանքն և բաղում աշխատանք և երախտիւք ունի ի վերայ վանից, զխախտեալ և բեկեալ աւերս ի վանքն նորոգեաց, որ ոչ կարեմք գրովք արկանել, թէ դումբէթի սալերն, երես բացին և զգաւթի պարսպի սալերն նորոգեաց, ղտնտեստան առանքն զվերին դարկահի տանիսն, փակահներն, բաղչի պարիսպն և այլ բազում աւերս շինեաց զաղբիւրն և այլ բազումս»[67]։ Վանքի վերջին նորոգությունները XIX դարի երկրորդ կեսից են, զանազան բարեկարգումների հետ համալիրի կազմում ավելանում են մի դպրոց և որբանոց[68]։

Զանազան աղբյուրների տեղեկությունները համադրելով, ստացվում է, որ Խնդրակատար ս. Աստվածածին վանքը բովանդակել է ուղղանկյուն պա-

---

59 Մ. Միրաքորյան. նշվ. աշխ., հ. Ա, էջ 59. հմմտ. «Բյուզանդիոն», 1898, № 508 նաև «Հանդես Ամսօրյա», 1937, էջ 319 և այլն։

60 Այդ կապակցությամբ տե՛ս F. Macler. Notre-Dame de Billis «Բանասեր», 1905, № 10, էջ 295—296. հմմտ. Ն. Սարգիսյան. նշվ. աշխ., էջ 241 և այլն։

61 Հմմտ. Jean Mecerian, Histoir et institutions de l'e'glise Arme'nie'nne. Beyrouth. l' institut de lettres orientales de Beyrouth, T. XXX, p. 18—43. A. Grabar. Martyrium. N. Y., 1953, p. 314—518. Ղ. Ալիշան. Արշալոյս քրիստոնեութեան Հայոց. Վենետիկ, 1920, էջ 190—226 և այլն։

62 Ղ. Փիրղալեմյան. Նօտարք Հայոց, էջ 188—189։

63 Հ. Ոսկյան. նշվ. աշխ., էջ 928—930։

64 Հ. Թոփճյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Խ. Դաղյան վարդապետի. Վաղարշապատ, 1895, էջ 99։

65 «Բանասեր», 1905, էջ 296 301։

66 Նույն տեղում, էջ 297։

67 Նույն տեղում, էջ 301։

68 «Բիւզանդիոն», 1900, № 1150 հմմտ. «Արարատ», 1898, էջ 299։

որսպապատերի արևելյան պարագծին հարող գավիթն ու տաճարը, պարսպապատերի մեջ համատեղված վանական խցեր և այլ օժանդակ՝ տնտեսական նշանակության ղանաղան սենյակներ, աղբյուր և ջրաղաց։ Ղ. Ինճիճյանի տվյալներով, Խնդրակատար ս. Աստվածածինը Բաղեշի վանքերից ամենաընդարձակն է եղել[69]։

Մեզ հասած նկարագրական նյութերը հիմնականում վերաբերում են վանքի գլխավոր Ս. Աստվածածնա եկեղեցուն։ Այն արտաքինից 48×34 ոտնաչափ (իմա՝ 16×11.4 մ) երկարություններով ուղղանկյունի է, բարձրությունը՝ 26 ոտնաչափ (=9 մ)[70]։ Փաստորեն, շենքը կենտրոնական չորս սյուներով գմբեթավոր բազիլիկ է, պարագծային հարաբերությունը՝ 1 : 1,3։ Դահլիճը եռանավ և եռասրահ է։ Հաշվի առնելով շենքի երկայնական առանցքով խորանային մասի զբաղեցրած մոտ 4 մ հատվածը, ստացվում է, որ դահլիճը համարյա 9 մ կողմով քառակուսի է, որտեղ սովորաբար կենտրոնական նավի լայնության հարաբերությունը կողայիններին՝ ուղիղ համեմատական է արտաքին պարագծի երկարությունների հարաբերությանը։ Հետևաբար, Խնդրակատար ս. Աստվածածնի հորինվածքային համակարգը նման է Տարոն-Վասպուրականում և հատկապես Նախիջևանում տարածում գտած գմբեթավոր բազիլիկներին, ինչպես Շատախի Ս. Հովհաննեսը, Ապարանքի ավերակ եկեղեցին, Բաստը, Կիզվակը և այլն։ Նշված զուգահեռների նման Խնդրակատար ս. Աստվածածին եկեղեցին ևս եղել է եռախորան։ Ի տարբերություն Բաղեշի մյուս հուշարձանների, որոնք մեծ մասամբ կղմինդրապատ տանիքով են, Խնդրակատար ս. Աստվածածինը ծածկված է եղել սրբատաշ քարե սալերով[71]։ Եկեղեցու մուտքային հատվածում տեղադրվել է յոթ սյունանի և ութանիստ վեղարով դարպաս-զանգակատուն։ Հուշարձանի ճակատներում եղել են բազմաթիվ խաչքարեր։

Գոմոց Ս Աստվածածին կամ Տատրակաբնակ վանքը (նկ. 3, Ա) գտնվել է Բաղեշից 2 կմ հյուսիս-արևմուտք, համանուն գյուղի հյուսիս-արևելյան կողմում, խոսքով կամ խոցերով գետի աջ ափին։ Ավանդապատումը վանքը համարում է առաքելաշեն։ Նրա մասին առաջին մատենագրական տեղեկությունը XV դարից է։ Գլխավոր տաճարը մուտքի վրա ունի 1681 թ. արձանագրություն, մինչդեռ տախտակյա փեղկի վրա հանդիպում է 1587 թ.։ Համաձայն նշված արձանագրության, եկեղեցու վերաշինումը կատարվել է խարխլման հետևանքով, երբ փուլ են եկել վանական խցերը և Եվզնկա անվանված արտաքին պարսպի աշտարակը։ Այդ կապակցությամբ վիմագիր արձանագրությունում հաղորդվում է. «Շինեցի և հիմանէ վանքս կամարակապ և հաստատեցի. վերաշինեցաւ սբ. Աստվածածնի եկեղեցիքս ի հիմանէ սրբատաշ վիմօք չորեքանկեան»։ 1889 թ. Տատրակավանքում բացվում է նաև դպրոց[72]։ Այսօր վանքի տեղում մնում են Ս. Աստվածածնա եկեղեցու ավերակները[73]։

Զանազան հեղինակների հաղորդած տեղեկությունների համադրման հիման վրա Գոմոց Ս. Աստվածածինը կազմված է եղել պարսպապատերով պարփակված ուղղանկյուն տարածության կենտրոնական մասերում արևելք-արևմուտք առանցքով տեղադրված գավիթ-տաճար հորինվածքից, մատուռից, եկեղեցու մուտքային մասում տեղադրված դարպաս-զանգակատնից, 8—10 հատ երկհարկ վանքապատկան խցերից, գոմերից և այլ օժանդակ վանական շինություններից։ Վերջինների մասին Կյուլեսերյանը գրում է. «Գոմոց վանքի մյուս շենքերը, թեև երկհարկանի, սակայն այնքան աչքի զարնող բաներ չեն և եկեղեցվույն հետ ստեպ-ստեպ հաճախ նորոգություն տե-

69 Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն..., հ. Ա, էջ 174։

70 Հմմտ. «Արծուի Վասպուրականի», 1864, էջ 196։

71 Ղ. Ինճիճյան. Աշխարհագրութիւն... հ. Ա., էջ 174։

72 Սանատրուկ Գումբասյան. Պիթլիս,—«Փունջ», 1896, № 2492։

73 Տե՛ս J. M. Thierry. Monasteres Arménienne du Vaspurakan, IX, Revue des études Armeniennes, NS, 1977, p. 195—198; T. A. Sinclair. Op. cit., p. 307.

սածՄ[74]։ Վանական շենքերի կազմում ավելացել է վերջին շրջանում կառուցված առաջնորդարանի շենքը։

Գոմոր Աստվածածնա եկեղեցու չափերը հայտնի չեն։ Գոյություն ունեցող տեղեկություններում նշվում է, որ այն արտաքինից ուղղանկյուն մեծաչափ շենք է եղել։ Եկեղեցին կենտրոնում չորս սյուներով, ութ որմնա-



Նկ. 3

մույթերով, արևելյան մի զույգ երկհարկ ավանատներով գմբեթավոր բազիլիկ տիպի կառույց է եղել[75]։ Փաստորեն, եկեղեցին իր բոլոր տվյալներով համեմատական է վերևում փաստագրված Խնդրակատար ս. Աստվածածնի և նրա զուգահեռների հետ։

Ավեր կամ Ավեխու Ս. Աստվածածնա վանքը համաձայն ավանդապատմության հիմնադրվել է Թադեոս առաքյալի կողմից, դրա համար կոչվել է նաև

74 «Բիւզանդիոն», 1900, № 1148. հմմտ. «Արևելք», 1887, № 985 և 1189. և այլն։

75 Տե՛ս Դ. Կ ե ր տ մ ե ն ջ յ ա ն. Տատրակավանք.—Հայկական հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 603։

Ս. Թադեի վանք։ Կարծիք կա, որ Ս. Թադեն և Ավեր Ս. Աստվածածինը երկու իրարամերձ վանքեր են եղել, ինչպես Ամլորդվո և Անանիայի վանքերը։ Հ. Ոսկյանն ու Հ. Տաշյանը հակված են այն կարծիքին, որ Ս. Թադեն վանքի հնագույն մատուռն է եղել, իսկ Ս. Աստվածածինը՝ գլխավոր եկեղեցին, ինչը թվում է իրականությանը ավելի մոտ[76]։ Համալիրի կազմում եղել են նաև մենախցեր, ախոռներ և այլ օժանդակ սենյակներ։ Ավեր կամ Ավեխ վանքը, ինչպես անունն է ցույց տալիս, համանուն թաղամասի կամ արվարձանի նվիրական սրբավայրն էր։ Այն գտնվել է Բաղեշի հարավ-արևելյան կողմում, դարպասամերձ համանուն հրապարակից հարավ՝ քաղաքի համապատասխան ծայրամասում։

Ավեր վանքի մասին ձեռագրային առաջին տեղեկությունը XV դարից է[77]։ Ավելի ուշ հիշատակությունները բազմաթիվ են։ Վանքը XV—XVII դդ. մի քանի անգամ վերանորոգվել է, իսկ 1915 թ. Մեծ եղեռնին ավերվել և կողոպտվել է[78]։ Տեղում այժմ ավերակ վիճակում գոյություն ունի Նուհիյե մեղրեսե անվանված համալիրը, որտեղ, Թ. Սինկլերի հաղորդմամբ, քանդակազարդ, հին ինչ-որ շենքում գործում է քաղաքի ոստիկանատունը. մի փոքր հեռու պահպանվել են հյուսիսից հարավ երկարող սենյակների շարքը, դեպի արևելք և արևմուտք առանցքային տեղադրությամբ երկու գումբեթներ (տաճար-դամբարան) և հյուսիս-արևմտյան անկյունում կիսաքանդ մնում են շքամուտքի ավերակները[79]։ Փաստորեն, Բաղեշի հայ բնակչության բռնի տեղահանությունից հետո վանքը վերածվել է մահմեդական կրոնական դպրոցի, իսկ առաջնորդարանային շենքը՝ ոստիկանատան։ Համեմատելով մատենագրական տեղեկությունները Սինկլերի վերոհիշյալ նկարագրության հետ, եզրահանգել կարելի է, որ արտաքինից ուղղանկյունի, գմբեթավոր Ս. Աստվածածնա գլխավոր եկեղեցին վանքի կազմում տեղադրված է եղել շքամուտքից հարավ՝ արևելյան պարսպապատի կենտրոնական հատվածներում։

Բաղեշ քաղաքի և նրա հուշարձանների կատարված փաստագրական վերլուծությունը ցույց է տալիս.

1) Ճանապարհորդական տեղեկություններով Բաղեշ քաղաքից հասել են տասնհինգ եկեղեցական հուշարձաններ։ Դրանցից ոչ մեկը չափագրական նյութեր չունենալով հանդերձ, մասնագիտական ուսումնասիրության համար նյութ են տալիս (վերևում ըստ հնարավորին փաստագրված) ութ ներքոհիշյալ հուշարձանները՝ ա- Կարմրակ Ս. Նշանը փոքր գմբեթավոր տիպի եկեղեցի է, որի տարոն-վասպուրականյան նշելի զուգահեռներից են Շատախի Ս. Տիկնա եկեղեցու մատուռը, նույնպես Շատախի մերձակա Կաճետ գյուղի Ս. Գևորգը, Մշո Առաքելոց վանքի Ս. Թադեոսը, Խլաթի մերձակա Մատնավանքի կամ Մատրավանքի փոքր եկեղեցին, Արտազի Ծործորի վանքի Ս. Գևորգը, Ջուղայի Տավարածի կամ Հովվի եկեղեցին, Ռշտունիքի Բելու գյուղի Ս. Հայրապետը, Հոգյաց վանքի Ս. Աստվածածինը, Վերին Վարագա վանքի Ս. Աստվածածինը և այլն։

բ- Մզկիթի վերածված մայր տաճարը եռանավ բազիլիկ տիպի եկեղեցի է. նրա նշելի զուգահեռներից են Վանի Ս. Սիոնը և Հայկավանքի Ս. Աստվածածինը, Ոստանի մայր տաճարը։ Այս տիպի բոլոր տարոն-վասպուրականյան օրինակները մեզ հասել են մատենագրական տեղեկություններով (բացի Հայկավանքի ներսույթի մի նկարից) և այժմ գոյություն չունեն։ Համահայկական բազիլիկ տիպի տաճարների զուգահեռները (Ապարանի, Եղվարդի, Երերույքի, Աղցի, Աշտարակի Տիրանավոր, Տիժեռնավանքը, Քասաղը և այլն) գերակշռությամբ վաղ միջնադարից են։

գ- Ամլորդվո վանքի Ս. Հովհաննես Մկրտիչը, Խնդրակատար, Գոմոց և Ավեխու վանքերի Ս. Աստվածածին գլխավոր եկեղեցիները գմբեթավոր բա-

76 Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 915։

77 Դ. Սրուանձտյանց. Թորոս Աղբար, հ. Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 426։

78 Հ. Ոսկյան. նշվ. աշխ., էջ 914—918։

79 T. A. Sinclair. Op. cit., p. 306.

գիլիկ տիպի հորինվածքներ են։ Դրանց տարոն-վասպուրականյան զուգահեռներից նշելի են՝ Ապարանքի մեծ, Բաստի, Կիզվակի, Շատախի Ս. Հովհաննես, Մանազկերտի Ս. Աստվածածին և Ս. Գևորգ, Ագուլիսի և նախիջևանյան բազմաթիվ եկեղեցիները։ Գմբեթավոր բազիլիկների համահայկական զուգահեռները բազմաթիվ են միջնադարի բոլոր ժամանակաշրջաններից։

դ- Հինգ խորանը բազմախորան տիպի տաճար է, որ դեռևս տարոն-վասպուրականյան զուգահեռներ չունի։ Համահայկական զուգահեռները գերակշռությամբ զարգացած միջնադարից են (Բագարան, Կարսի շրջանի Գոդուրա Ս. Գևորգ, Կարինի շրջանի Բանակի փոքր եկեղեցին, Անիի Աբուղամրևնց և միջնաբերդի եկեղեցիները, Բագնայրի փոքր եկեղեցին, Անիի Կուսանացը և այլն)։

ե- Ս. Կղեմեսը Ս. Սիմեոնը (որոշ վերապահությամբ) երկհարկ դամբարան տիպի եկեղեցիներ են, որ դեռևս տարոն-վասպուրականյան հայկական զուգահեռներ չունեն, իսկ հուշարձանի համահայկական զուգահեռները մեծ մասամբ XII—XIV դդ. են։ Հնարավոր է նաև, որ Ս. Կղեմեսն ու Ս. Սիմեոնը զույգ եկեղեցիներից կազմված հորինվածք լինեն, ինչպես Վանա Ս. Պողոս-Պետրոսը, Ս. Սահակ-Ստեփանոսը, Սորա Ս. Քրիստափորը և այլն։

2) Ուշագրավ է, որ վերևում նշված Բաղեշի տասնհինգ հուշարձաններից վեցը Ամլորդվո վանքի շրջապատից են։ Ավեր հրապարակից, Ամլորդվո թաղամասով մինչև Գոմոցը եղել են տասից ավելի մզկիթի վերածված հայկական եկեղեցիներ։ Ուստի ստացվում է, որ Բաղեշի քաղաքային հուշարձանների թիվը 2—3 տասնյակ էր։ Նշված փաստը ցույց է տալիս՝ նախ, թե որքան եկեղեցի կարող էր լինել զարգացած միջնադարյան Բաղեշում ընդհանրապես, երբ նրա բնակչությունը համարյա ամբողջությամբ հայատարը էր, և երկրորդ՝ թե ինչպիսի կենտրոնական և կարևոր նշանակություն է ունեցել Ամլորդվո թաղը և վերջապես Ամլորդվո վանքը քաղաքի կյանքում։

3) Դատելով Բաղեշի կառուցապատման զարգացման ընթացքից, բերդատակում եղած հուշարձանները (մայր տաճարը և Կարմրակ ս. Նշանը) կարելի է թվագրել վաղ միջնադարով։ Քաղաքի Ամլորդվո վանքից բացի մնացած վանքերը գտնվել են արվարձանային թաղամասերի ծայրամասերում։ Փաստորեն դրանք եղել են քաղաքամերձ վանական հաստատություններ դեռևս միջնադարյան ժամանակներից, ինչպիսին հանդիսացել են Անիի Կուսանացը, Վանի Հայնկույսները, Հայկավանքը և այլն։ Քաղաքային վեց վանքերով և երկու առաջնորդարանով Բաղեշը եզակի օրինակ է հայկական քաղաքաշինության մեջ։ Թեև Վանում և Մուշում եկեղեցական համալիրների ընդարձակումները կատարվել են զույգ եկեղեցիների կամ գավիթ-տաճարների հորինվածքով, Բաղեշում համայնքային մրցակցության հետևանքով ստեղծվել են վանական հաստատություններ իրենց բոլոր բաղկացուցիչ տարրերով։

4) Բաղեշի եկեղեցական շենքերի ճարտարապետության կապակցությամբ հետաքրքիր է Հ. Լինչի հետևյալ արտահայտությունը. «Բաղեշում և նրա արվարձաններում գտնվող եկեղեցական և վանական հաստատությունները բնորոշվում են որպես արտաքինից ուղղանկյուն պարագծով՝ քարաշեն և ամուր շինություններ։ Շենքերի ճակատներին և ներսույթներին բնորոշ են հայկական ճարտարապետության հատկանիշները։ Այսինքն՝ բարձրակարկառ մի գմբեթ, հենված կենտրոնական չորս սյուների վրա բոլորվող հարակից չորս կամարներին։ Դհլիճի արևելյան կողմում է շրջանաձև խորանով և այլ պարագաներով բեմը։ Քաղաքի հուշարձաններին առանձնահատուկ են գրմբեթարդների, սյուների և որմնամույթերի խոյակների ու այլ մակերեսների արաբական ոճ հիշեցնող զարդամշակումները[80]... ինձ համար չպարզաբանված մնաց տվյալ հուշարձանների տարիքը։ Դիտողը Բաղեշի շենքերում կնկատի ընտանեկան մի զորավոր կապ և նմանություն, որը մասամբ արդյունք-

80 Հ. Լինչի բառապաշարում արաբական պետք է հասկանալ միջինարևելյան։

է նաև գրանցում եղած արևելյան տարրերի առկայության...»[81]։ Փաստորեն Հ. Լինչի հաղորդումը վերաբերում է միայն Բաղեշի վանական եկեղեցիներին։ Հարկ է նշել, որ Բաղեշը տարոն-վասպուրականյան մյուս քաղաքների համեմատությամբ ուշագրավ է իր քաղաքային եկեղեցիների հորինվածքային ախպերի բազմազանությամբ։

Թեև Բաղեշի եկեղեցիների ճակատների և ասրածական լուծումների մասին տեղեկությունները սուղ են, սակայն հասած նյութերով իսկ կարելի է ընութագրել նրանց գունագեղ, վերձիգ հարարված լինելու հանգամանքը։ Բաղեշի եկեղեցիները, պահպանելով տարոն-վասպուրականյան համաչափական կարգը՝ Խլաթի, Խնուսի, Սիրոնքի և Մանազկերտի հետ մոտենում են Բարձր Հայքի տաճարային տիպերին և Հայաստանի Արևելից կողմանց գրմրեթային համակարգերին։ Բաղեշի տաճարների դարգամշակումը, համեմատելի լինելով հանդերձ Մակարավանքի, Գանձասարի, Բարձրաքաշ ս. Գրիգորի, Գոշավանքի և այլ հուշարձանների հետ, բարձրաքանդակների թեմատիկ բաժանվածությամբ զուգահեռ են Աղթամարին, Բալուի մայր տաճարին, Մանազկերտի Երեք խորանին և այլն։

ГОРОД БАГЕШ И ЕГО ЦЕРКВИ

Д. Г. КЕРТМЕНДЖЯН

Резюме

В исследованиях, посвященных церковному зодчеству Западной Армении, преимущественно представлены монастыри и церкви, находящиеся за пределами городов. Городские церкви, несмотря на наличие данных по ним, изучены недостаточно. С целью восполнения этого пробела в статье представлена градостроительная характеристика одного из городов Западной Армении—Багеша, классификация его церковных памятников, дислокация которых тесно связывается с планировочной структурой города.

[81] H. F. B. Lynch. Op. cit., p. 145—146